ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 29 - Ա
31 հուլիսի 2013 թ.

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ
ՄԱՍՆԱԳԵՏ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի կանոնադրության 3.11- րդ կետի դրույթներով

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի աշխատանքների իրականացմանը, ներքին աուդիտի տեղեկատվական կառավարման միասնական համակարգի և փաստաթղթային գործառույթների աշխատանքներին աջակցելու նպատակով Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ՖՍՏՋ վարչության ֆինանսա-տնտեսագիտական բաժնի մասնագետ Մարգարիտ Ասլյանին ներգրավել ներքին աուդիտի բաժնի աշխատանքներում:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է ստորագրման պահից:

Մարզպետի տեղակալ՝ Ա.ՀԱԿՈԲՅԱՆ